



Ղ.ԱՂԱՅԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԵՏԷՐԱՆ

38/0

Հ Մ Դ Ի Ի - 0 5

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՊԵՏՂԱՑ

ՀԼԿՏԵՍ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱԾԱՊԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՂԱՆ 1938

- 6 FEB 2013

6459

Պատ. խմբագիր՝ Ռ. Զարյան  
Տեխ. խմբագիր՝ Ան. Գառնապետյան  
Սրբազրիչ՝ Թ. Լուսինյան

891.995 սԿ.  
Ս-44

# ԹՈՂՆԻԿՆԵՐ

## ԱՂՈՒՆԱԿ

Ղ՛ՐԼ — ղ՛ՐԼ — ղ՛ՐԼ,  
Ս՛ — ղ՛ՐԼ — ղ՛ՐԼ,  
Նա՛կ, նա՛կ  
Ա. — ղ՛ՐԼ նա՛կ,  
Թ՛Ր՝ ռռռ...



1689

38

Ֆլադիխին լրագրի Կ.—4703 Հրատ 1250  
Գառնիք 1080 Տիրած 4000  
Թուղթ. 62x94 Տպարարական Աճ մամ.  
Մեկ մամ. 30720 նիշ հեղինակային 1 մամ.  
Հանձնված և արտադրության 20 սեպտեմբերի 37 թ.  
Ստորագրված և տպագրության 27 դեկտ. 1937  
Գինը 50 կ.

Պետական տպարան, Յերևան, Լենինի փող 63

ԿԱԶԱՂԱԿ

Չան — չան — չան,  
Կա — չան — չան,  
Ղանկ — զանկ,  
Կա — չա — զանկ,  
Թր՛ոռո...

Ծ Ի Տ Ի Կ

Ծիա եմ, ծիա եմ, ծըվըլում եմ,  
Ճիի՛կ, ճիի՛կ, ճիի՛կ,  
Վոստոստոստում եմ, թռչկոտում եմ,  
Տիի՛կ, տիի՛կ, տիի՛կ,  
Արի, թեվիկ,  
Արի, փեարիկ,  
Վոր յես դառնամ  
Փոքրիկ ծիտիկ:  
Փոքրիկ ծիտիկ  
Պիծիկ միծիկ  
Թր՛ոռո...

Ա Ք Ա Ղ Ա Ղ

Աքաղաղը կանչում է,  
— Ծուլըուզն,  
Ղու — զու — զո՛ւ.  
Պառավ նանը զարթնում է,  
— Տա — տա — տա՛ն,  
Պա — պա — պա՛ն...

Աքլար, ինչո՞ւ կանչեցիր,  
ինչո՞ւ նանին զարթեցրիր,  
Ա՛խ դու — դո՛ւ,  
Ա՛յ Ղու — Ղո՛ւ:

Ա՛յ նանի, Ղա՛ն նանի,  
Մեզ մի վեր կացնի,  
Թող մի քիչ ել մնանք,  
Քնից լավ կշտանանք:

Աքլարը շուտ է կանչում,  
Աքլարը քեզ է խաբում,  
Աքլար, ինչո՞ւ կանչեցիր,  
ինչո՞ւ նանին զարթեցրիր,  
Ա՛խ դու — դո՛ւ  
Ա՛յ Ղու — Ղու...

Ա Ր Ե Գ Ա Կ

Արև-արև, յեկ, յեկ,  
Զիզի քարին վեր յեկ.  
Սե-սե ամպեր, հեռացեք  
Արևին ճանպա տըվեք:

Թողեք դա գա մեզ մոտ  
Իրա լույսին ենք կարոտ.  
Կարմիր արև, յեկ, յեկ,  
Նախշուն քարին վեր յեկ:

Արևն հաղթեց ամպերին,  
Շողքը ձգեց սարերին,  
Զիզի քարը տես, տես,  
Պսպրղում է փոսկու պես:

Սիրուն արև, միշտ յեկ,  
Զիզի քարին վեր յեկ:

ԾԻՏԸ ՅԵՎ ԲԱԶԵՆ

Ծիտը ծառին ծլվլլում է —

— Ծիվ, ծիվ, ծիվ.

Բազեն գլխին պտըտվում է —

— Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ...

Ծիտը լռեց, ծիտը վախեց —

— Վա՛յ, վա՛յ, վա՛յ...

Բազե, թը՛ռռ, բազե թը՛ռռ —

— Հա՛յ, հա՛յ, հա՛յ...

Բազեն թռավ,

Բազեն փախավ,

Ի՞նչ լավ ելավ

— Հե՛ — հե՛ — հե՛...

Ծիտիկ, միտիկ, պիծիկ միծ

Պրտպրտուրիկ, չըպըտուրիկ,

Դու լավ պրծար չար բազեյի

Սուր ճանկերից, հա՛ — հա՛ — հա՛...

ԱՌԱՎՈՏԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Արեգակը դուրս է յեկել

Պսպրդալով,

Շողքը հերթից ներս է ընկել

Շողշողալով.

Ծիտը ծառին կշկշում է

Ծըվլլալով,

Չորումն ատուն քրչքրչում է

Վըշվըշալով.

Ծույլ աղայի քունն է տարել

Խըմփալով.

Տրեխները շունն է տարել

Մըմըռալով:

Ճ Ա Խ Ա Ր Ա Կ

Մանիր, մանիր, իմ ճախարակ,  
Մանիր սիպտակ մալանչներ,  
Մանիր թելեր հաստ ու բարակ,  
Վոր յես հոգամ իմ ցավեր:

Ձեթ եմ ածել ականջներդ,  
Նոր շինել եմ շրտըվիկ,  
Դեհ, շուտ շարժիր լայն թևերդ  
Վոստեր շինիր սրբուլիկ:

Մանիր, մանիր, իմ ճախարակ,  
Լիսեռնիկըդ պտրտիր,  
Մանիր թելեր հաստ ու բարակ  
Իլիկիդ վրա փաթաթիր:

Տիգրանիկս գուլպա չունի,  
Հանդ ե գնում վոտարաց,  
Գաբրիելս չուխա չունի,  
Միշտ անում ե սուգ ու լաց:

Մանիր, մանիր, իմ ճախարակ,  
Մանիր սիպտակ փաթիլներ,  
Մանիր թելեր հաստ ու բարակ,  
Վոր յես հոգամ իմ ցավեր:

Չրվալ չունենք, չաթու չունենք,  
Վոչ սամոտեն, վոչ պարան,

Այսպես աղքատ դեռ յեղած չենք,  
Կտրվել ե ամեն բան:

Դեռ հարս եյի, վոր գործեցի  
Քանի կարպետ, խալիչա,  
Բայց դրանցից շուտ գրկվեցի,  
Հիմա չունեմ մի քեչա:

Կարմիր որբս յերբ սևացավ  
Յեվ պարտք մնաց՝ թեև քիչ,  
Պարտատիրոջ սիրտն ել սևցավ  
Յեկավ տարավ ամեն ինչ:

Մանիր, մանիր, իմ ճախարակ,  
Մանիր սիպտակ քուլաներ,  
Մանիր թելեր հաստ ու բարակ,  
Վոր յես հոգամ իմ ցավեր:

## ՏԱՎԱՐԱԾԻ ՃԱՇԸ

Մի խամ տավարած,  
Բավական քաղցած,  
Աղբբի մոտ նստած,  
Ուտում եր չոր հաց:

— Յամաք մի ուտիլ,  
Ասաց ընկերը:

— Բա ինչո՞վ ուտեմ,  
Ուրիշ բան չունեմ:

— Դանակով, յեղբայր, դանակով...

— «Այդ լավ ասացիր.  
Դանակով կտրեմ,  
Ջրումը թրջեմ,  
Ել ցամաք չուտեմ»...

## ՀՈՎՎԻ ԱՆԿՈՂԻՆԸ

Սարի լանջն է մահճակալ...  
Չեչոտ քարը՝ գլխակալ.  
Մի հին կարպետ ուտերին,  
Այս է հովվի անկողին:

Յերբ անձրև է կաթկաթում,  
Յե՛վ կարպետը թրխկթրխկում,  
Հովիվն անուշ քնի մեջ  
Քաղցրը յերազ է տեսնում:

Յե՛վ խնդում, ծիծաղում.  
Ուխա՛յ, ուխա՛յ, սիրուն հովիվ  
Քունդ անուշ...

ՋԱՂԱՑՊԱՆԻ ՔՈՒՆԸ

Յերեք-չորս հատ ջաղացաքար,  
Կարգով շարված պտըտվում են,  
Իրենց ահեղ գոռգոռոցով  
Ամբողջ շենքը դղրրդում են:

Չանչախսների չբխկչբխկոցից  
Մարդի ահանջ խլանում է,  
Իսկ ջաղացպանն ալրաթաթախ,  
Սոր քունն ընկած խրոբմփում է:

Բայց ջաղացը յեթե հանկարծ  
Կտրե ձայնը, լռե, սառչի,  
Ինչպես մի թունդ թնդանոթից՝  
Ջաղացպանը վեր կըթռչի...

ՊԱՌԱՎԻ ՇՈՐԹԸ

Ձյուն եր գալիս փաթիլ-փաթիլ  
Հեան ել անձրև կաթիլ-կաթիլ,  
Այս միջոցին մի պառավ կին  
Հորթ եր փնտռում դաշտի միջին:

Կովը յեկավ տավարիցը,  
Կուրծ ու ծրծեր կաթով լիքը.  
«Հորթուկս ուր ե», նա բառաչեց,  
Սեղճ պառավին լացացրեց:

Մինչդեռ այսպես պառավ ու կով  
Վողբում եյին լաց ու կոծով,  
Հանկարծ լավեց մի բարակ ձայն,  
Կովն իմացավ, վոր հորթն է այն:

Կովը վազեց բառաչելով,  
Պառավն յետքից արեքտընքալով,  
Կորած հորթը մորը գտավ,  
Լիք ծրծերը բերանն առավ:

Ծրծեց բուրբ կաթն ու տուզեց,  
Տանախկնոջը բան չբթողեց.  
Բայց պառավը այս անգամին  
Սիրով ներեց չար հորթուկին:

ՀՆՁՎՈՐՆԵՐ

Ահա յեկավ խոտ հարողը,  
Ուսին զրած գերանդին,  
Բոլոր խոտը սա հարել է,  
Բան չի թողել մեր հանդին:

— Այ խոտ հարող, ասա տեսներք,  
Դու ինչպես ես խոտ հարում,  
— Այսպես ահա, լավ նայեցեք,  
Յես այսպես եմ խոտ հարում —  
Հի՛ պ, հո՛ պ,  
Հի՛ պ, հո՛ պ:

— Ախ, ե՛նչ լավ է, յեկ սովորենք  
Մենք ել այսպես խոտ հարենք —  
Հի՛ պ, հո՛ պ,  
Հի՛ պ, հո՛ պ:

\*  
\*  
\*

Ահա յեկավ մեր հնձողը,  
Ձեռքին փայտե մատնոցներ  
Պատրաստել է սուր մանգաղը,  
Պետք է հնձի մեր արտեր:

— Հնձող յեղբայր, ասա տեսներք,  
Դու ինչպես ես հուճճ անում:

Այսպես ահա, լավ նայեցեք,  
Յես այսպես եմ հուճճ անում —  
Հի՛ պ, հո՛ պ, հե՛ պ,  
Հի՛ պ, հո՛ պ, հե՛ պ:

— Ախ, ինչ լավ է, յեկ սովորենք,  
Մենք ել այսպես հուճճ անենք,  
Հի՛ պ, հո՛ պ, հե՛ պ,  
Հի՛ պ, հո՛ պ, հե՛ պ:

1689  
38



Ա Ր Ե Վ

Արև, արև, դու մեզանից  
Յերբ հեռացար դեպ հարավ,  
Չմեռն յեկավ և ամեն ինչ  
Հափշտակեց ու տարավ:

Միրուն արև, ել մի գնար,  
Մեզ մի թողնիր քեզ կարոտ,  
Քեզ կրպատվենք, քեզ կըզովենք  
Միշտ, իրիկուն, առավոտ:

Վորքան գոհ ենք, վոր դու բերիր  
Գարնան անուշ յեղանակ,  
Ախ, յերանի գարուն լինի  
Տարին բոլոր ժամանակ:

Տես, թե ինչպես փթըթել են  
Ծառ ու ծաղիկ, կանաչ խոտ,  
Տես թե ինչպես տարածվել և  
Ամենայն տեղ անուշ հոտ:

Քեզ են գովում թռչնիկները  
Իրանց քաղցը դայլայլով,  
Հովիվը իր մեզմ սրինգով,  
Հոտաղն անուշ հոլովով:


Չե, արև ջան, ել չըգնաս,  
Ել չըթողնես մեզ կարոտ,  
Գնա քնիր գիշերները,  
Առավոտը յեկ մեզ մոտ:

Մ Ա Ն Ո Ւ Շ Ա Վ

Միրուն մանուշակ, ինչո՞ւ յես թոռմեր,  
Կապույտ աչիկներդ ինչո՞ւ յես փակել,  
Քեզ ո՞վ նեղացրեց, ո՞վ վատ բան ասեց,  
Քո անուշ հոտովդ ո՞վ չը գմայլվեց:

— Միրուն մանուկներ, դուք ինձ սիրեցեք,  
Իմ ծաղիկներից փնջեր կապեցեք,  
Բայց կոշտ ձեռներից, կոպիտ ճանկերից  
Ինձ չազատեցիք, չըպահպանեցիք:

Քնքույշ սրտերը շուտ են կոտրվում,  
Քնքույշ ծաղիկները շուտ են թառամում.  
Քանի վոր անխիղճ մարդիկ կըլինեն,  
Յերկար չեմ ապրիլ յես այս աշխարհում:



ԼՈՒՍՆԱՅ

— Հայրիկ, ինչո՞ւ մեր Բողարը  
Միշտ հաչում է լուսնի վրան,  
Մի՞թե պայծառ լուսնիակը  
Մեկ փաս է տալիս նրան:

— Վոչ, վորդյակ իմ, վոչ թե փաս,  
Այլ լույս, միայն լույս է տալիս,  
Իսկ շանն՝ իբրև գայլի ցեղի՝  
Լույս գիշերը գուր չի գալիս:

Բայց լուսինը խոմ չըզիտե՞,  
Վոր իր վրա հաչողներ կան, —  
Նա լուռ ու մունջ՝ բակ բուրբա՞՝  
Շարունակում է իր ճամպան:

«Մենք ել, վորդյակ, լուսնի նման  
Պետք է լույս տանք մութ աշխարհին,  
Յե՛վ համարենք, թե չենք լսում  
Մեզ վրբա գուր հաչողներին»:



ԳՐՆԸ 60 Կ.

170

6459

Գ. ԱԳԱՅԱՆ  
ՏՒԽՈՏՎՕՐԵՆԻԵ  
ԴԻՅ ԱՐՄ ՍՏՐ, ԵՐԵՎԱՆ

891.99Մ.  
Q-44